ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/36

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Մասիսի համայնքապետարան
Մասնակից՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Դավթյանի, ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1536-2021 գրությամբ «Կապիտալ

Դիզայն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Մասիսի համայնքապետարանի 02.02.2021թ. թիվ 60 գրության հիման վրա, 05.02.2021թ.-ին «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 05.02.2021թ.-ին:

08.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/36 համարի ծածկագիրը:

18.02.2021թ.-ին, 25.02.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. Մասիսի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Մասիսի համայնքապետարանը 02.02.2021թ. թիվ 60 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ. կնքված ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1 պայմանագրով վերջինս ստանձնել էր պարտավորություն մինչև 13.10.2020թ. կատարել նախագծանախահաշվային աշխատանքներ: Երկրում արտակարգ դրության, այնուհետև ռազմական դրության պայմաններից ելնելով «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն խնդրել էր պայմանագրի կատարման համար լրացուցիչ ժամկետ տրամադրել մինչև 2021թ. հունվարի 11-ը: Նշված ժամկետում «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն Պատվիրատուին չի տրամադրել նախագծանախահաշվային

աշխատանքները: Ստեղծված իրավիճակից ելնելով պատվիրատուն ընկերությանը տրամադրել է ողջամիտ ժամկետ՝ 3 աշխատանքային օր աշխատանքները ավարտին հացնելու համար, սակայն Կատարողը չի կատարել պայմանագրային պարտավորությունները:

Դեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով և հաշվի առնելով պայմանագրի 2.1.3 կետը պայմանագիրը լուծվել է:»:

Պատվիրատուն 03.03.2021թ.-ին ներկայացված գրությամբ, հավելել է հետևյալը.

«Դիրքորոշմամբ նշված է թե իբր ՍՊԸ-ն վերամշակված նախագծանախահաշվային աշխատանքները ներկայացրել է պատվիրատուին համապատասխանաբար 09.01.2021թ, 11.01.2021թ, 17.01.2021թ, 20.01.2021թ, 21.01.2021թ, 21.01.2021թ, 22.01.2021թ, 26.01.2021թ, չի համապատասխանում իրականությանը և չկա որևէ ապացույց, կամ դրանց լինելու դեպքում չի ներկայացվել, իսկ եթե ներկայացված էլ լիներ արդեն իսկ 17.01.2021 թ, 20.01.2021թ, 21.01.2021թ, 22.01.2021թ, 26.01.2021թ. ներկայացրած նախագծերը աշխատանքների կատարման վերջնաժամկետին չէր համապատասխանի, քանի որ 12.01.2021թ. մեր կողմից տրվել է լրացուցիչ եռօրյա ժամկետ որից հետո ՍՊԸ-ն Պատվիրատուին չի արձագանքել եռօրյա ժամկետի սակավ լինելու կամ այլ հարցերով:

Ինչ վերաբերում է պայմանագրի միակողմանի լուծման գրության թե նշվել է միայն պայմանագրի 2.1.3 կետը և չի նշվել ենթակետը հարցին նշեմ որ խախտվել է երկու ենթակետերը այն է.՝

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքը և չի համապատասխանել պայմանագրի պահանջներին և խախտվել է կատարման ժամկետը:

Ինչ վերաբերում է, որ Պատվիրատուն Ընկերությանը որևէ բացասական եզրակացություն չի ներկայացրել նախագծանախահաշվային աշխատանքների վերաբերյալ, ապա նշեմ որ փորձագիտական բացասական եզրակացությունը Պատվիրատուի կողմից Ընկերությանը ուղարկելը արդեն բավական է, բացի այդ պայմանագրով նախատեսվել է նաև «նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից

հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ»: Սակայն ոչ ավարտից հետո և ոչ ընթացքում չի քննարկել և չի համաձայնեցվել պատվիրատուի հետ:

Ջրամիացման տեխնիկական պայմանի և էլ. սնուցման տեխնիկական պայմանի վերաբերյալ հարկ եմ համարում նշել որ դա միայն անհրաժեշտ է փորձաքննության համար: Ստանալով համապատասխան գրությունները Ընկերությանը բավարար էր փորձագիտական եզրակացություն ստանալու համար: Իսկ ինչ վերաբերում է, որ Ընկերությունը բանավոր համաձայնեցրել է փորձագետների հետ խնդրում եմ այդ հարցի համար հաջորդ նիստին հրավիրել ԶԱ ՔՈՄՓԱՆԻ ընկերության փորձագետներին, պատասխանելու այն հարցին, արդյոք Ընկերության կատարած աշխատանքները համապատասխանել են պատվիրատուի պահանջներին թե ոչ: Անհրաժեշտությունից ելնելով խնդրում ենք բողոքարկման խորհրդին պարզի Ընկերությունը քանի աշխատակից ունի, ովքեր են ընդգրկվել կատարելու վերոնշյալ աշխատանքները, որվքեր են մեկնել ռազմաճակատ և մինչ 28.12.2020թ չեն զորացրվել և ներկայացնի համապատասխան գրավոր ապացույցները: Այս հարցը շատ կարևոր է, քանի որ հնարավոր է որ Ընկերությունը շահարկել է ռազմական դրությունը, տալով կեղծ փաստաթուղթ, փորձելով ժամանակ շահել, քանի որ չի կարողացել կատարել Պատվիրատուի պահանջները: Հարցի լուծման համար կարևոր փաստ է նաև թի ինչու է պատվիրատուն միայն 25.12.2020թ տեխ. պայմանների վերաբերյալ գրությամբ հանդես եկել: Նշեմ որ Ընկերությունը միայն 24.12.2020թ բանավոր դիմելով տեխ. պայմաների մասին սեղմ ժամկետում ստացել է համապատսան լուծումը: Իսկ եթե նախագծի համար էական նշանակություն ուներ և չէր կարող լիարժեք ավարտին հասցնել աշխատանքը ապա պահանջը կառաջանար պայմանագիրը կնքելուց հետո սեղմ ժամկետում: Սրանից ևս մեկ անգամ փասում է որ չի կարողացել կատարել պայմանագրային պարտավորությունները և ցանկացել է ժամանակ շահել:»:

3. <u>«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1536-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Մասիսի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 12.08.2020թ. կնքվել է «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել համապատասխանաբար՝ 13.10.2020թ.:

Համաձայն Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 13.10.2020թ. իրականացներ՝ 5-րդ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերման և Մասիս քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի, թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մասնաշենքի, թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի մասնակի, թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և 1 խմբասենյակի մասնաշենքի սանհանգույցի հինանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ:

ՀՀ-ում ստեղծված իրավիճակից ելնելով, այն է՝ covid-19 համավարակով պայմանավորված սահմանափակումները և ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու հետևանքով պայմանավորված՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի դիմում-խնդրանքի հիման վրա աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2021թ. հունվար:

«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն համապատասխանաբար՝ 04.09.2020թ. /5-րդ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտ/, 23.09.2020թ. /թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ/, 30.09.2020թ. /թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ/, 13.10.2020թ. /թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ/ և 14.11.2020թ. արդեն վերամշակված /4 և 7 մանկապարտեզ ՀՈԱԿ/ իր էլեկտրոնային հասցեից Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին է ուղարկել Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը (էլ. փոստից ուղարկված նամակը վերահասցեագրվում է Ձեզ):

Այնուհետև «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն՝ փորձագիտական վերահսկողություն իրականացնող <<ՁԱ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ-ի կողմից ստանալով եզրակացություն, որ

«ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ, «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում վերամշակվել են և բանավոր քննարկելով <<ՀԱ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ-ի փորձագետների հետ միասին՝ համապատասխանաբար բոլոր աշխատանքները՝ 09.01.2021, 11.01.2021, 17.01.2021, 20.01.2021, 21.01.2021, 22.01.2021 և 26.01.2021թ. վերամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը կրկին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է Պատվիրատուին (էլ. փոստից ուղարկված նամակը վերահաս¬ցեագրվում է Ձեզ):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի և Մասիսի համայնքապետարանի միջև 12.08.2020թ. կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից՝ թվագրված 27.01.2021թ.՝ միակողմանի լուծվել է Պայմանագրերի 2.1.3 կետի ուժով /չի նշվել ենթակետը/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնա՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ¬ցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ. կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից 27.01.2021թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրերի 2.1.3 կետի ուժով:

Պայմանագրի 2.1.3 կետի ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած աշխատանքները Պայմանագրով սահմանված ժամկետում ուղարկելու, սակայն այդ հիմքով Պայմանագիրը լուծելու վերաբերյալ

Հարկ ենք համարում նշել, որ Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ. կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել համապատասխանաբար՝ 13.10.2020թ., այնուհետև երկկողմանի համաձայնությամբ այն երկարացվել մինչև՝ 2021թ. հունվար:

Այս պարագայում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն հանգամանքի վրա, որ Պատվիրատուի համար պայմանագրերը միա¬կող-մանի լուծման համար հիմք է հանդիսացել 2.1.3 կետը, այն է՝ Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Մասնավորապես, Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետում (համապատասխան ապացույցը կցվում է) էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին է ներկայացվել Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը /համապատասխանաբար՝ 04.09.2020թ., 23.09.2020թ., 30.09.2020թ., 13.10.2020թ. և 14.11.2020թ./:

Այնուհետև ստանալով փորձագիտական վերահսկողություն իրականացնող <<ՀԱ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ-ի եզրակացություն, որ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ, «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում վերամշակել է դրանք և բանավոր քննարկելով <<ՀԱ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ-ի փորձագետների հետ միասին՝ համապատասխանաբար 09.01.2021, 11.01.2021, 17.01.2021, 20.01.2021, 21.01.2021, 22.01.2021 և 26.01.2021թ. վերամշակված նախագծանախա-հաշվային փաստաթղթերը կրկին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Պատվիրատուին:

Այսինքն՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն վերամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ համապատասխան փոփոխություններով հանդերձ, կրկին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Պատվիրատուին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Պատվիրատուն որևէ բացասական եզրակացություն չի ներկայացրել Ընկերության կողմից Պատվիրատուին ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ, իսկ այդ փաստաթղթերը վերամշակվել են հենց ՍՊԸ-ի նախաձեռնությամբ՝ փորձագետ

ընկերության ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում՝ վերջինիս խնդրանքով, ով՝ ըստ էության, չի հանդիսանում Պատվիրատու, այլ հանդիսանում է տվյալ Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքի վերաբերյալ եզրակացություն տրամադրող ընկերություն:

Մինչդեռ Պատվիրատուի կողմից պայմանագրերը լուծվել են այն Պայմանագրի 2.1.3 կետի հիմքով, այսինքն Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը, սակայն չի նշվել թե 2.1.3 կետի որ ենթակետն է խախտել,այլ ընդամենը վերացական նշվել է 2.1.3 կետ:

Ավելին՝ Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ Պատվիրատուն նշել է, մասնավորապես՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն նշված ժամկետում Պատվիրատուին չի տրամադրել նախագծանախահաշվային աշխատանքները, ստողծված իրավիճակից ելնելով պատվիրատուն ընկերությանը տրամադրել է ողջամիտ ժամկետ՝ 3 աշխատանքային օր աշխատանքները ավարտին հասցնելու համար, սակայն Կատարողը չի կատարել պայմանագրային պարտավորությունները:

Սակայն թվարկված փաստերը վկայում են, որ Ընկերության կողմից թե՛ 04.09.2020թ.-14.11.2020թ. և թե՛ շտկման արդյունքում նաև 09.01.2021թ.-26.01.2021թ. ներկայացվել են պայմանագրերով նախատեսված բոլոր նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ վերամշակված տարբերակով:

Այլ կերպ ասած, եթե պայմանագիրը լուծելու համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ իբրև թե ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին չեն տրամադրել նախագծանախահաշվային աշխատանքները, ապա չէ որ ՍՊԸ-ն այդ բոլոր փաստաթղթերը ներկայացրել է պատվիրատուին՝ 09.01.2021թ.-26.01.2021թ. ընկած ժամանակա-հատվածում:

Իսկ եթե վերամշակված փաստաթղթերը եղել են թերի, ապա առկա չէ դրանց վերաբերյալ որևէ բացասական եզրակացություն:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև մի շատ կարևոր հանգամանք. Պատվիրատուի թերի աշխատանքի արդյունքում մինչև մեր կողմից աշխատանքների կատարման ժամկետի ավարտը այդպես էլ չտրամադրվեց ջրամիացման տեխնիկական պայմանը, էլ. սնուցման տեխնիկական պայմանը, նախագծանա-խահաշվային աշխատանքների երկրաբա¬նական հանույթը, տարածքի տեղակապումը և այլն, առանց որի հնարավոր չէր կատարել փաստաթղթերի ամբողջական մշակումը, որոնց վերաբերյալ՝ ի պատասխան մեր բանավոր բազմաթիվ պահանջների և խնդրանքների՝

Պատվիրատուն միայն 25.12.2020թ. գրությամբ հայտնել է, որ վերը թվարկված աշխատանքները կիրականացվի շինարարական աշխատանքների ընթացքում /կցվում է/, ինչը ևս իր հերթին դժվարացրել մեր աշխատանքները:

Գտնում ենք, որ տվյալ դեպքում՝ թիվ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագրով մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելու փաստի արձանագրմանը և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Սույն գործում առկա փաստերով, ՍՊԸ-ի կարծիքով, հիմնավորվում է, որ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» պայմանագրով մասնակցի կողմից ներկայացվել է Պայմանագրով սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթերը Պատվիրատուի համապատասխան էլ. փոստի հասցեին: Սակայն, Պատվիրատուն չի արձագանքել ներկայացված փաստաթղթերին, մասնակցին չի տեղեկացրել վերջինիս կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատաս¬խանելու փաստի մասին, եթե այդպիսին առկա է եղել, չի տրամադրել ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ աշխատանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ իր հերթին կհանգեցներ թիվ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի մասով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր, մասնավորապես նշենք թիվ ՍՑ-ԼՕ-2020/235, թիվ ՍՑ-ԼՕ-2020/209 ծածկագրով ընթացակարգերը: Օրինակ թիվ ՍՑ-ԼՕ-2020/209 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ 16.10.2020թ. կայացրած որոշմամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը որոշել է՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.–ի թիվ 26/26-1/13698-2020 գրությամբ «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/209 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կեղտանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված պարտավորությունը խախտելու մեջ, ըստ ՍՊԸ-ի, բացակայում է պարտապանի մեղավորությունը՝ փաստաթղթերը սահմանված ժամկետում ուղարկելու պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, մասնավորապես՝ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել նաև ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ.-ի թիվ 228-Ն /ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ.-ի ապրիլի 1-ի թիվ 180-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին/ հրամանով սահմանված պահանջների պահպանումը և Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի <<բ>> պարբերությամբ նախատեսված իրավանորմերի պահանջները:»:

Վերոգրյալը հաշվառմամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը 04.03.2021թ.-ին ներկայացրած լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2021/36 ծածկագրով ընթացակարգը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել էինք՝ Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ. կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից 27.01.2021թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրերի 2.1.3 կետի ուժով:

Պատվիրատուի կողմից թե՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ, և թե 25.02.2021թ. տրամադրված դիրքորոշմամբ՝ Պատվիրատուն նշել է, որ

1. «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն նշված ժամկետում Պատվիրատուին չի տրամադրել նախագծանախահաշվային աշխատանքները, ստեղծված իրավիճակից ելնելով պատվիրատուն ընկերությանը տրամադրել է ողջամիտ ժամկետ՝ 3 աշխատանքային օր աշխատանքները ավարտին հասցնելու համար, սակայն Կատարողը չի կատարել պայմանագրային պարտավորությունները.

2. 09.01.2021, 11.01.2021, 17.01.2021, 20.01.2021, 21.01.2021, 22.01.2021 և 26.01.2021թ. որևէ փաստաթուղթ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել Պատվիրատուին:

Եվ այսպես՝ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետում (համապատասխան ապացույցը կցվում է) էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին է ներկայացվել Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը /համապատասխանաբար՝ 04.09.2020թ., 23.09.2020թ., 30.09.2020թ., 13.10.2020թ. և 14.11.2020թ./, այն ուղարկելով Մասիսի համայնքապետարանին պատկանող էլ. փոստի հասցեին masismer.gnumner@mail.ru /հրավերի համապատասխան էջից արված ապացույցը կցվում է/:

Այնուհետև ստացել ենք փորձագիտական վերահսկողություն իրականացնող <<ՀԱ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ-ի եզրակացությունը (համապատասխան ապացույցը կցվում է), որ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ: «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում վերամշակել է դրանք և բանավոր քննարկելով <<ՀԱ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ-ի փորձագետների հետ միասին՝ համապատասխանաբար 09.01.2021, 11.01.2021, 17.01.2021, 20.01.2021, 21.01.2021, 22.01.2021 և 26.01.2021թ. վերամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը կրկին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Պատվիրատուին (համապատասխան ապացույցը կցվում է):

Հատկանշական է նաև մեկ այլ կարևոր հանգամանք, Պատվիրատուի թերի աշխատանքի արդյունքում մինչև մեր կողմից աշխատանքների կատարման ժամկետի ավարտը այդպես էլ չտրամադրվեց ջրամիացման տեխնիկական պայմանը, էլ. սնուցման տեխնիկական պայմանը, նախագծանախահաշվային աշխատանքների երկրաբա¬նական հանույթը, տարածքի տեղակապումը և այլն, առանց որի հնարավոր չէր կատարել

փաստաթղթերի ամբողջական մշակումը, որոնց վերաբերյալ՝ ի պատասխան մեր բանավոր բազմաթիվ պահանջների և խնդրանքների՝ Պատվիրատուն միայն 25.12.2020թ. գրությամբ հայտնել է, որ վերը թվարկված աշխատանքները կիրականացվի շինարարական աշխատանքների ընթացքում /կցվում է/, ինչը ևս իր հերթին դժվարացրել մեր աշխատանքները:

Գտնում ենք, որ տվյալ դեպքում՝ թիվ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագրով մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելու փաստի արձանագրմանը և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Սույն գործում առկա փաստերով, ՍՊԸ-ի կարծիքով, հիմնավորվում է, որ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» պայմանագրով մասնակցի կողմից ներկայացվել է Պայմանագրով սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթերը Պատվիրատուի համապատասխան էլ. փոստի հասցեին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ բոլոր փաստաթղթերը վերամշակվել են հենց ՍՊԸ-ի նախաձեռնությամբ՝ փորձագետ ընկերության ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում՝ վերջինիս խնդրանքով, ով՝ ըստ էության, չի հանդիսանում Պատվիրատու, այլ հանդիսանում է տվյալ Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքի վերաբերյալ եզրակացություն տրամադրող ընկերություն և այս պարագայում ուղղակի հնարավոր չէ ՍՊԸ-ի մեղադրել աշխատանքները չներկայացնելու համար, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացրել, այսինքն՝ այս պարագայում, երբ առկա էր փորձագիտական ընկերության եզրակացություն՝ ուստի փաստվում է կա նաև կատարված աշխատանք, որի հիման վրա տրվել է եզրակացություն, իսկ արդեն 25.02.2021թ. դիրքորոշմամբ՝ Պատվիրատուն արդեն հայտնել է, որ աշխատանքները չի ներկայացվել նաև 09.01.2021, 11.01.2021, 17.01.2021, 20.01.2021, 21.01.2021, 22.01.2021 և 26.01.2021թ., մինչդեռ աշխատանքները ամբողջ փուլով կատարվել են, վերացվել են անհամապատասխանությունները և քննարկելով փորձագիտական եզրակացություն տրամադրող ընկերության փորձագետների հետ՝ այն ուղարկվել <<ԶԱ ՔՈՄՓԱՆԻ>> ՍՊԸ-ին պատկանող karenaraqelyan83@gmail.com էլ.

Հասցեին /ապացուցվում է նրանով, որ բացասական եզրակացությունը ՍՊԸ-ի ուղարկվել է հենց karenaraqelyan83@gmail.com էլ. Փոստի հասցեից/:

Սակայն թվարկված փաստերը վկայում են, որ Ընկերության կողմից թե՛ 04.09.2020թ.-14.11.2020թ. և թե՛ շտկման արդյունքում նաև 09.01.2021թ.-26.01.2021թ. ներկայացվել են պայմանագրերով նախատեսված բոլոր նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ վերամշակված տարբերակով, չնայած նաև այն հանգամանքին, որ 2020թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սանձազերծեց Հայաստանի նկատմամբ, իսկ պատերազմի ամբողջ ընթացքում «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն իրականացրել է պայմանագրային պարտավորությունները, ինչն էլ անհաղթահարելի ուժի պատճառով՝ իր հերթին հանգեցրել էր Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների ձգձգման, ավելին ժամկետների ձգձգմանը խթանել է նաև Պատվիրատուի անգործությունը, որը այդպես էլ չապահովեց՝ ջրամիացման տեխնիկական պայմանը, էլ. սնուցման տեխնիկական պայմանը, նախագծանախահաշվային աշխատանքների երկրաբանական հանույթը, տարածքի տեղակապումը և այլն:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Ընկերությունը գտնում է, որ վերջինիս դրսևորված վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորությունների խախտման:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հաշվի առնել ներկայացված փաստերը և ապացույցները և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

4. <u>ՍՑ-LO-2021/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Մասիսի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ.-ին կնքվել է թիվ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» (այսուհետ նաև՝ Պայմանագիր) ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 աշխատանքային օրը ներառյալ:

v. Մասնակցի կողմից 04.09.2020թ.-ին, 23.09.2020թ.-ին, 30.09.2020թ.-ին, 13.10.2020թ.-ին և 14.11.2020թ.-ին էլ. փոստով Պատվիրատուի masismer.gnumner@mail.ru էլ. փոստի հասցեին ներկայացվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

vi. Փորձագիտական վերահսկողություն իրականացնող «Զա Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից կազմված եզրակացության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ:

vii. Մասնակցի կողմից 09.01.2021թ.-ին, 11.01.2021թ.-ին, 17.01.2021թ.-ին, 20.01.2021թ.-ին, 21.01.2021թ.-ին և 26.01.2021թ.-ին էլ. փոստով փորձագիտական վերահսկողություն իրականացնող «Զա Քոմփանի» ՍՊԸ-ի karenaraqelyan83@gmail.com էլ. փոստի հասցեին ներկայացվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների շտկված տարբերակները:

viii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 29.01.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 20 ծանուցման համաձայն՝ Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ.-ին կնքված թիվ

«ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը Մասիսի համայնքապետարանի կողմից 27.01.2021թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի ուժով (կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, ինչպես նաև խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1536-2021 գրությամբ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ.-ին կնքված թիվ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 աշխատանքային օրը ներառյալ:

Մասնակցի կողմից 04.09.2020թ.-ին, 23.09.2020թ.-ին, 30.09.2020թ.-ին, 13.10.2020թ.-ին և 14.11.2020թ.-ին էլ. փոստով Պատվիրատուի masismer.gnumner@mail.ru էլ. փոստի հասցեին ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերում փորձագիտական վերահսկողություն իրականացնող «Զա Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:

Մասնակցի կողմից 09.01.2021թ.-ին, 11.01.2021թ.-ին, 17.01.2021թ.-ին, 20.01.2021թ.-ին, 21.01.2021թ.-ին և 26.01.2021թ.-ին նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների շտկված տարբերակները էլ. փոստով ներկայացվել է ոչ թե Պատվիրատուի masismer.gnumner@mail.ru էլ. փոստի, այլ փորձագիտական վերահսկողություն իրականացնող «Զա Քոմփանի» ՍՊԸ-ի karenaraqelyan83@gmail.com էլ. փոստի հասցեին:

Վերոնշյալով պայմանավորված՝ Մասիսի համայնքապետարանի և «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի միջև 12.08.2020թ.-ին կնքված թիվ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը Մասիսի համայնքապետարանի կողմից 27.01.2021թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի ուժով (կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, ինչպես նաև խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը)՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 29.01.2021թ.-ին հրապարակվելով պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 20 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, թիվ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների խախտումը տեղի չի ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս չի նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ է ձեռնարկել դրանց նվազեցման համար՝ տրամադրելով այդ պարտավորությունները կատարելու համար հավելյալ ժամկետ:

Սույն գործում առկա փաստերով հիմնավորվում է նաև, որ «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/9-1» պայմանագրով «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից 09.01.2021թ.-ին, 11.01.2021թ.-ին, 17.01.2021թ.-ին, 20.01.2021թ.-ին, 21.01.2021թ.-ին և 26.01.2021թ.-ին նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների շտկված տարբերակները էլ. փոստով ներկայացվել է ոչ թե Պատվիրատուի masismer.gnumner@mail.ru էլ. փոստի, այլ փորձագիտական վերահսկողություն իրականացնող «Զա Քոմփանի» ՍՊԸ-ի karenaraqelyan83@gmail.com էլ. փոստի հասցեին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1536-2021 գրությամբ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/36 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**